Շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղար
պարոն Գ. Գույանին

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.**
   Արսեն Նիկոյան, Միջազգային համագործակցության վարչության պետի տեղակալ,
   Անի Ղուկասյան, Կլիմայական քաղաքականության վարչության ավագ մասնագետ:

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Վրաստան, ք. Քութաիսի, 2023 թվականի հուլիսի 3-6-ը:

3. **Հրավիրող կողմը.**
   Միավորված ազգերի կազմակերպության Շրջակա միջավայրի ծրագիր /UNEP/ և Լեռնային շրջանների կայուն զարգացման կովկասյան ցանց /Sustainable Caucasus/:

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   Մասնակցություն «Կլիմայի փոփոխության հարմարվողականության տարածաշրջանային երկխոսություն Հարավային Կովկասում» հանդիպմանը և Կովկասյան լեռնային երրորդ ֆորումին:

5. **Քննարկված թեմաները (հարցերը).**
   «Կլիմայի փոփոխության հարմարվողականության տարածաշրջանային երկխոսություն Հարավային Կովկասում» հանդիպման ընթացքում քննարկվել են.
   - «Հարավային Կովկասում տարածաշրջանային հարմարվողականության երկխոսություն» հայեցակարգի նախագիծը,
   - լեռնային համայնքներում հարմարվողականությանը աջակցող մոնիթորինգի, տվյալների և տեղեկատվության շրջանակի ընդհանուր ակնարկի մշակման հետ կապված հարցերը,
   - Հարավային Կովկասում տարածաշրջանային հարմարվողականության երկխոսություն 2023-2026 թվականների գործունեության ծրագիրը,
   - ազգային մակարդակում իրականացվող կլիմայի փոփոխության հարմարվողականության միջոցառումների և լեռնային համայնքների կայուն զարգացման քաղաքականության, կլիմայի փոփոխության հարմարվողականության ազգային ծրագրերից բխող միջոցառումների, հնարավոր համատեղ ծրագրերի համար տարածաշրջանային հարմարվողականության առաջնահերթությունների քարտեզագրման հետ կապված հարցեր և այլն:

Կովկասյան լեռնային երրորդ ֆորումի ընթաքում ներկայացված հիմնական թեմաներ եղել են.

- զբոսաշրջությունը՝ որպես լեռնային կայուն զարգացման հիմնական կենսամիջոց,
- լանդշաֆտների պաշտպանության և լեռնային զբոսաշրջության զարգացման միջառարկայական մոտեցումները. գիտնականների դերը հետազոտությունների, պլանավորման և զարգացման գործում,
- շրջակա միջավայրի պահպանությունը և կլիմայի փոփոխությունը՝ որպես հիմնական մարտահրավեր զբոսաշրջության կայուն զարգացման համար:

Ֆորումի ընթացքում կայացել են նաև տարբեր թեմատիկ հանդիպումներ՝ փոքր խմբերով, այդ թվում"

- կլիմայի փոփոխության ռիսկերը Հարավային Կովկասում,
- փոքր դրամաշնորհների միջոցով ազգային մակարդակում կլիմայական միջոցառումների մշակում Հարավային Կովկասում,
- սոցիալ-տնտեսական ներուժը, խոցելիությունը, հարմարվողական կարողությունները կլիմայի փոփոխության նկատմամբ,
- ջրային ռեսուրսների վրա կլիմայի փոփոխության ազդեցությունը,
- լեռնային շրջաններում կայուն զբոսաշրջություն զարգացնելու վերաբերյալ թեմատիկ պաստառների ցուցադրություն և այլն:

6. **Հանդիպումները, ելույթները.**

«Կլիմայի փոփոխության հարմարվողականության տարածաշրջանային երկխոսություն Հարավային Կովկասում» հանդիպմանը մասնակցում էին Հարավային Կովկասի տարածաշրջանի երկրների, ինչպես նաև Միավորված ազգերի կազմակերպության Շրջակա միջավայրի ծրագրի, Շվեյցարական համագործակցության գրասենյակի (SDC), Լեռնային շրջանների կայուն զարգացման կովկասյան ցանցի, հասարակական այլ կազմակերպությունների, գիտական հանրույթի ներկայացուցիչներ: Ինչպես նշվեց, հանդիպման ընթացքում քննարկվել է «Հարավային Կովկասում տարածաշրջանային հարմարվողականության երկխոսություն» հայեցակարգի նախագիծը, որի վերաբերյալ Արսեն Նիկոյանի կողմից ներկայացվել է շրջակա միջավայրի նախարարության դիրքորոշումն առաջարկվող փաստաթղթի վերաբերյալ՝ առաջարկելով հայեցակարգի նախագծից հանել «նախարարության պարտադիր հիմունքներով մասնակցությունը տարածաշրջանային համագործակցության երկխոսությանը» սահմանող պարբերությունը: Հաշվի առնելով նախագծի վերաբերյալ ներկայացված այլ առաջարկությունները ևս՝ նախագիծը բանավոր չհաստատվեց հանդիպման ընթացքում (ինչը նախատեսված էր հանդիպման օրակարգով): Հանդիպման կազմակերպիչները հայտնեցին, որ համապատասխանաբար կխմբագրվի հայեցակարգի նախագիծը, որտեղ «նախարարության պարտադիր հիմունքներով մասնակցությունը տարածաշրջանային համագործակցության երկխոսությանը» սահմանող պարբերությունը կփոխարինվի «կամավորական հիմունքներով» մասնակցության ձևակերպմամբ: Համաձայնություն ձեռք բերվեց, որպեսզի հայեցակարգի լրամշակված տարբերակը ներկայացվի շրջակա միջավայրի նախարարության դիտարկմանը:

«Կլիմայի փոփոխության հարմարվողականության տարածաշրջանային երկխոսություն Հարավային Կովկասում» հանդիպման ընթացքում Անի Ղուկասյանը ներկայացրել է (սահիկաշարով շնորհանդես) «Ազգային մակարդակում իրականացվող կլիման փոփոխության հարմարվողականության միջոցառումները և լեռնային համայնքների կայուն զարգացման քաղաքականությունը և համակարգումը»: Վերջինիս կողմից ներկայացվել են նաև կլիմայի փոփոխության հարմարվողականության ազգային գերակայությունները՝ տարածաշրջանում կլիմայի փոփոխության հարմարվողականության քաղաքականության գերակայությունները քարտեզագրելու նպատակով:
Կովկասյան լեռնային երրորդ ֆորումին մասնակցում էին Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի, Թուրքիայի, Գերմանիայի, Իրանի, Շվեցարիայի, Լեհաստանի, Ավստրիայի, ինչպես նաև Միավորված ազգերի կազմակերպության Շրջակա միջավայրի ծրագրի և Լեռնային շրջանների կայուն զարգացման կովկասյան ցանցի, հասարակական կազմակերպությունների, գիտական հանրույթի ներկայացուցիչներ:
Կովկասյան լեռնային երրորդ ֆորումին Անի Ղուկասյանի կողմից ներկայացվել է «Շրջակա միջավայրի պահպանությունը և կլիմայի փոփոխությունը՝ որպես հիմնական մարտահրավեր զբոսաշրջության կայուն զարգացման համար» թեմայով շնորհանդեսը (սահիկաշարով): Ելույթում անդրադարձել է Հայաստանին բնորոշ կլիմայական ռիսկերը, հիմնական էքստրեմալ երևույթներն ու վտանգները, դրանց միտումները և ազդեցությունը զբոսաշրջության ոլորտի վրա, ինչպես նաև զբոսաշրջության ոլորտում նախատեսվող կլիմայի փոփոխության հարմարվողականության միջոցառումները:

7. **Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Հանդիպումների ընթացքում փաստաթղթեր չեն ստորագրվել:
Կովկասյան լեռնային երրորդ ֆորումին Թեմատիկ պաստառների ցուցահանդեսում Հայաստանի ներկայացրած պաստառը՝ լեռնային շրջաններում կայուն զբոսաշրջություն զարգացնելու վերաբերյալ, զբաղեցրեց երրորդ տեղը՝ ստանալով համապատասխան հավաստագիր:

*Գործուղվող՝* *Արսեն Նիկոյան*

*Անի Ղուկասյան*

*12.07.2023թ.*